

«ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՆՑ 2025».ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է

04.03.2025 16:56



Հարգելի գործընկերներ,

ՀՀ փաստաբանների պալատը, չխախտելով ձևավորված ավանդույթը, **Կանանց միջազգային օրվա կապակցությամբ** նախատեսում է իրականացնել կանանց իրավունքներին նվիրված միջոցառում, որի շրջանակներում փաստաբանները, Փաստաբանական ակադեմիան **2025թ. մարտի 10-ից 14-ը** հանրապետության ամբողջ տարածքում անվճար իրավաբանական խորհրդատվություն կտրամադրեն կանանց:

Միջացառումը նպատակ է հետապնդում ոչ միայն խթանել կանանց իրավունքների պաշտպանությունը Հայաստանում, այլ նաև հասարակությանը ներկայացնել փաստաբանի իրավապաշտպան առաքելությունը, բարձրացնել հանրային իրավագիտակցությունը և փաստաբանին դիմելու իրավական մշակույթը:

Այս տարի վերը նշված միջոցառման իրականացմանը համախմբվելու կարևոր առիթ է նաև Հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների, հատկապես անվճար իրավաբանական օգնության տրամադրման հարկման անողջախոհ կարգավորումները:

Փաստաբանները, անվճար իրավաբանական օգնություն տրամադրելով, կընդգծեն իրենց իրավապաշտպան առաքելությունը:

Ակնկալում ենք ակտիվ մասնակցություն:

Նախաձեռնությանը միանալու համար անհրաժեշտ է **մինչև մարտի 7-ը** հետադարձ հաղորդագրությամբ (info@advocates.am) հայտնել այդ մասին: Հաղորդագրության մեջ անհրաժեշտ է նշել փաստաբանի անունը, ազգանունը, արտոնագրի համարը, կոնտակտային տվյալներ, օրինակ՝ հեռախոսահամար, ինչպես նաև անհրաժեշտ է նշել այն վայրը (հասցեն), որտեղ պատրաստակամ եք տրամադրել անվճար իրավաբանական օգնությունը:

Հավելենք, որ անվճար իրավաբանական օգնությունը կարող եք տրամադրել նաև ՀՀ փաստաբանների պալատում:

Միջոցառման համակարգման աշխատանքները կիրականացնի Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Լուսինե Սարգսյանը:

Վերադառնալ `$(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } }`